Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--------- ---------- 2025 թվականի N - Լ

Հայաստանի Հանրապետության ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ հոկտեմբերի 24-Ի N 1485-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ փոփոխությունՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 1485-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

- Որոշման հավելվածի 33-րդ կետը լրացնել նոր 3.1-ին ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«3.1) 2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին կտրամադրվի ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի մինչև 80 (ներառյալ) տոկոսի չափով սուբսիդավորում.».

- Որոշման հավելվածի 33-րդ կետը լրացնել նոր 12-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«12) 2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար գործակալության անդամ յուրաքանչյուր ապահովագրական ընկերությանը փոխհատուցվում է նաև վերջինիս կողմից ընդհանուր հավաքագրած ապահովագրավճարի հանրագումարի 200 տոկոսի չափը գերազանցող, տնտեսավարողներին

փոխհատուցված ապահովագրական հատուցումների գումարը։» .

- Որոշման հավելվածի 35.1-ին կետում «2024 թվականի գյուղատնտեսական» բառերը փոխարինել «2024 և 2025 թվականների գյուղատնտեսական» բառերով, «մինչև 2024 թվականի» բառերը փոխարինել «մինչև տվյալ տարվա» բառերով, իսկ «11-րդ ենթակետով» բառերը փոխարինել «11-րդ (2024 թվականի համար) և 12-րդ (2025 թվականի համար) ենթակետերով» բառերով .
- Որոշման հավելվածի 43-րդ կետում «2019 և 2024» բառերը փոխարինել «2019, 2024 և 2025» բառերով, իսկ «հաշվին։» բառից հետո լրացնել «2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար նախատեսված ապահովագրական ընկերություններին փոխհատուցվող գումարի (ապահովագրական ընկերության կողմից ընդհանուր հավաքագրված ապահովագրավճարի հանրագումարի 200 տոկոսի չափը գերազանցող, տնտեսավարողներին փոխհատուցված ապահովագրական հատուցումների գումարը) ֆինանսավորումը կիրականացվի կողմ 2-ի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվին։» նախադասությունը։

2. Սահմանել, որ սույն որոշմամբ հատկացվող ֆինանսական միջոցների վրա չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման գործողությունը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ